

1X697

1X698

1X699

1XX00


1XX01

1XX02

1XX03

891.99

U-94





ՕՍԿԵՐ ՊԵՏՐՈՎԻՉՆ ԷՆ ԿԻՆՔՈՒՄԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Առաջին անգամ՝ սերկայացքած է Թիֆլիզի  
քաղաքային թատրոնում 1866 թուի  
ապրիլի 12-ին:

003.

891.99  
U-9483  
nr

ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՇԻ

## ԵՆ ԿԻ ՆՔՈՒ ՄԸ

ԿԱՏԵՐԳՈՐԻՉԻՆ ՄԵՒ ՌԵՌՈՒՆՁՈՎ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Այս զբուածքը հեղինակից անկախ պատճառ-  
ներով կրել է, նախ՝ «ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՇԻ ՀՐԱ-  
ԶՈՒՄԸ» անունը, ապա՝ «ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՇԻ ՀՐԱ-  
ԶՈՒՄԸ»:

1001  
348

ՀԵՂԻՆԱԿՈՒՅԻՆ

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ԹԻՓԼԻԶ

Արագատիպ ՄՆ. Մարտիրոսեանցի,  
Միքայէլիան փողոց № 81.

1899



4019

ԱՐՑԱՇԵՍ ՍՈՒՔԻԱՄԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՆՈՒՔԻ

ՀԵՂԻՆԱԿԻՑ

Дозв. ценз. Тифлисъ, 13-го Июня 1899 г.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՕՍԿԵՐ ՊԵՏՐՈՎԻՉ... ԱՐՏԱՇԵՍ ՍՈՒՅԻՆՍԵՆՆԴ

ՄԵԺ ԱԱՏԵՆԵՑ..... ՄԻՋՐԴԱՏ ԱՄԵՐԻԿԵԱՆ :

Օսկան Պետրովիչի ընտանիքը, Սաթայէլ, սատանաներ, պար եկող շար հոգիներ, դժոխքի ծառաներ եւ մեղաւոքներ:

Անցքը պատահում է դժոխքի կտուրի վրայ, Օսկան Պետրովիչի տանը և դժոխքի մէջ:

Բեմը ներկայացնում է դժոխքի  
կտուրը:

ՅԵՍՈՒ ԱՌԱՋԲԵ

ՕՍԿԱՆ, ՍԱՏԱՆԱՆԵՐ, ՊԱՐ ԵԿՈՂ  
ՀԱՐ ՀՈԳԻՆԵՐ

ՕՍԿԱՆ, ԱՎԹԱԿԱՆԵՐԻ ՅԵԿԻՆ ԱՎԹԱԿԱՆԵՐՆԵ:  
Վա՛, խանի-խալարնիր, ձեռը չիք  
վիկալնի, լին գուղիք ինձմէն... (ԱՎԹԱԿԱՆԵ-  
ՆԵՐՆ ու չար հոգիները պարուճ են նրա առաջ,  
առհոսներները չար հոգիներն, և շուպով բարու-  
թուճ: \*) ) Ես ուր բերին ինձ էս անիծած-

\*) Առհասարակ սատանաներն ու պար եկող  
շար հոգիները պէտք է խելօք վարուին և շխան-  
դարեն գործողութեան ընթացքը, ինչպէս արին  
այդ առաջին ներկայացմանը:

նիրը... (Գաղտնացած հայուած է այս ու այն ժողովը) Յօրէս կու խիզավիմ, ձիր արիւը գիլդենայ... (Հոգուպուած է եր շր-ըջը:) Էս ինչ կպրի ու նաւթի հուտ է վալի, ախպէր... Ուրհ, էս ինչ շուք է, ախպէր... (Գրտնից հանուած է եր հայուած լաշէնուէլ<sup>\*)</sup> և հապենչը ուբուած:) Զիր արիւը, վունչիչ չէ օտկում. Սօլոլակի ջրիւը գլխեմէս մէճկն է անցկենում... (Յանէած վէր է լաշուած և սպները զնուած:) Վայ մէ, վուտնիրս էրվում է... (Գետնից սպնուած է երպէտի նոր սպոտնեռնէր էն դուրս գումա, ուրպախուած էն և յէտ երանց արեւը լաշուած:) Էս էրազումս իմ, թէ արագումի իմ տեսնում... Դրաւստ սատաներու նման ին, ձիր արիւը, էս անիծածնիրը... (Գաղտնաւցած այս և այն էրդին ընէնելով, հօգենուած է մի արձանի, որ ուշուած է նըտան:) Էս էլ ինչ է... չը՛, բարի աշողում... (Արձանը դարձեալ ուշուած է:) Բարի աշողում, ասում

<sup>\*)</sup> Տես «Գիզիրպան ՍԱՅՐԸ Խէր է» կատակերգութիւնը:

իմ. քէփիդ վմւնց է... (Արձանը էրին ուշուած է:) Արա թէ ձէն հանէ... կ'յ, քէփիդ վմւնց է, վմւնց... (Արձանը հանուած է անշարժ:) կ'հ, զլշմալ... (Մասնաւած է մի ուրիշ արձանի, որ նոյնպէս ուշուած է նըտան:) Էս ովքիր ին, ախպէր: (Արձանին:) Բարով, հազար բարի. թէ քու հոքին կու սիրիս, մէ ինձ ասմա էստի ինչ իմ շինում... (Արձանը հանուած ուշուած է:) Տօ, լիզուտ Աստուծ կըտրի է... (Արձանը էրին ուշուած է և յէտոյ հանուած է անշարժ:) կ'հ, սա էլ զլշմալ է էլի... (Ոպնէրը լատի պալով:) Օ'հ, օհ, օհ... (Սարտնաներին:) կ'յ, խանի-խարաբնիր, էս ուր բերիք ինձ... (Սարտնաները ուրախուած նըտ սաւաշ լուսուած էնո էրիու գուշին սպոտնայ լաշուած էն նըտ ուրեւին, մի ուրիշն անցնուած է նըտ շէտամիջովը:) Գժուկիլ ին էս անիծածնիրը... (Ապսուրելով նըտանցից:) Ի՞նչ իք ուզում ինձմէն, ախպէր: (Թշուած է:) Փաւ, էս ինչ ասի. վարպանցի ախպէր ին իմը:

ՍԱՏԱՆԱՆԵՐ, վէր ու վէր լաշէւով:  
Ա'խպէր ինք, ախպէր ինք, ախպէր

ինք: (Գեղանի որովից ուստիչ և ստորանուններ են բարձրացնուած և հրաժար ել են իր հոգուած: ) Ալիսլէր ինք, ալիսլէր ինք:

Վերջնաներն ենի՞շն իջնուած են իրանց պեռը:  
0ՍԿԱՆ

Ե՛յ, ախմախնիր, վմւրզանցի ախմլէր ինք:  
ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ

Բաս ինչ ինք, վուր ախմլէր չինք.  
յօրէսի դէնը դիփ մէտի պլիտի ապլինք:  
0ՍԿԱՆ, պատուեկանից և հոգից հեղանալով:  
Ե՛յ, սարսաղնիր, գժվիլ իք, ձիղ մօդ  
մւր իմ ապլում. խիլքս հաց ու պանիր  
հիդ իմ կերի, վուր օղլուշաղս թողնիմ  
ու ձիղ մօդ ապլիմ:

Ստորանունները ծիծառուած են:  
ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ, ծիծառէլով:

Ի՞նչ օղլուշաղ. քու օղլուշաղը մինք  
ինք յօրէսի դէնը...

Փատին: ստորանունները լուցէլու իրին նստուած  
էն Օսիանի ուսուելին:

0ՍԿԱՆ, եւեռը նոշ հանելով:

ՄԵՂԱՅ Աստձու: (Ստորանունները վայր են

լուկանուած շնոր ուսուելից: ) Տօ, կորէք, մնիծած-  
նիլ է... (Մէջ ստորանունն: ) Վունց թէ իմ  
օղլուշաղը դուք իք:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ

Հա, բաս:

0ՍԿԱՆ

Ինչի:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ

Էնդուր վուր մեռար ու քու միլսկի  
համա դժուլսկի իս գալի:  
0ՍԿԱՆ

ՄԵՂԱՅ:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ

Հա, բաս, ու հիմի դժուլսկի կարի  
վրայ ինք:

0ՍԿԱՆ

ՄԵՂԱՅ... (Լաւուէ: ) Վայ մէ, Մարթա  
ջան... (Թալէնուուէ ծօպեցնուած է աչչէլին, ստո-  
րանունները ծիծառուած են. յեպոյ ուշի գուրվ: )  
Վունց թէ մեռայ, ինչ բէսար նամաղուլ  
իք անում. թէ մեռայ, ձիղ մօդ վունց  
իմ իօսում:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ  
ԵՄ էլ դմւն չիս:  
ՕՍԿԱՆ  
Վարունց թէ 'ես չիմ, բաս 'ես Օսկան  
Պետրովիշը չիմ:  
ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ, Ճիշտութեալ:  
Օսկան Պետրովիշի հոքին իս:  
ՕՍԿԱՆ, Էւլուժարութեալ ուն այս ու այս էնուն  
է ըստինութեալ:  
Վայ մէ, հիմի իմացայ. շվիդօրիթ-  
ցօլօ դա շվիլօ... Բաս էլ միլ քաղաքը  
չիմ տեսնի:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ  
Թէ, պլծաւ քու բանը:  
ՕՍԿԱՆ  
Էլ չէ... (Չեստը լուկ պատրի) Պրաշչայի  
Թիփիլիդ... (Լուս է:) Ա'ս, իմ Մարթա  
ջան, եալար լինչ իս անում հիմի էտի:  
ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ  
Ա'յ, լինչ է անում... Աբա, մէ յիդ  
մտիկ տու...  
Բէդ իրաբութեալ է Օսկանի ուստի մէ

«Ենեալ, ուզ աւելուկ նորուծ էն այս  
ին Մարթան, առջիւ կենելը\*) և ու-  
րեւ ուժուոր կանոյց:

### ՏԵՍՔԻ Բ

ՕՍԿԱՆ, ՍԱՏԱՆԱՆԵՐ է բեմ էոր-  
ժում՝ ՄԱՐԹԱ, ԿԵԿԻԼ, ՍԳԱԽՈՐ  
ԿԱՆԱՅՔ, յետոյ ԽԱՄՓԵՐԻ \*\*)

ՄԱՐԹԱ, ուժուու:  
Իմ փաշա ու գրօշա, Օ՛սկան ջան...  
Ինձին խռով ուր իս գնում...  
Թէ ինձ կու սիրիս, մէ հիդս ձէն տու...  
ՕՍԿԱՆ, լաւու:  
Էստի իմ, էստի, Մարթա ջան...  
Խիզն իմ կնիկ, շատ կու գջլտիս մաղիրդ,  
ամա էլ վունչինչ չիս օտկի...

\*) Տես «ԳԻՂԻՐՎԱՆ ՍԱԲՐԸ ԽԵՐ կ» կա-  
տակերգութիւնը:

\*\*) «ԽԱՄՓԵՐԱԼԱ» ԿՕՄԵԴԻԱՅԻ հերոսներից:

ՄԱՐԹԱ, սովորված:

Քու լէնքին ու էրգնքին մեռնիմ, 0՝սկան  
կան ջան...

Քու ժամասէր ջանին մեռնիմ, 0՝սկան  
ջան...

Հրիշտքներու մօդ ցնծում կուլիս, 0՝սկան  
կան ջան...

ՕՍԿԱՆ, շաբաթ:

Վունց չէ, սրանցն էլ հարցըրու...

ՄԱՐԹԱ, շաբաթական:

Իմ մամին բարով արա, 0՝սկան ջան,  
Ասա վուր Կէկէլի համա լաւ մարթ ճա-  
լեցինք.

Իմ դէղին էլ թնդ իմ մագիէր պաշ անէ:  
ՕՍԿԱՆ

Դիմի էտու փրքըրումն իմ էստի:

ՄԱՐԹԱ, շաբաթական:

Վնայ, վնայ, վնայ, վնայ, վնայ, վնայ...  
0՝սկան ջան ու 0՝սկան ջան:  
ՕՍԿԱՆ

ԽՌԴ իմ կնիկ, հալա լաւն էլ է, իր  
մտկումը արթար մարթ էր համարում ինձ.

Վուր զիդենայ թէ դժուխոկն իմ գալի, էն  
չախն ի՞նչ կուլէր նրա հալը:  
ԽԱՄՓԵՐԻ, շաբաթական ծածկած հանուն է սովո-  
րուներէ հօդ:

ԱՌԻ, 0՝սկան ջան, ու վախ, 0՝սկան ջան,  
Ասկի ուուքար, իմ 0՝սկան ջան.

Արա, մէ ձէն հանէ, 0՝սկան ջան,  
Քու քաղցր ձէնին մեռնիմ, 0՝սկան ջան.

Դուն էտղանց վի կաց, 0՝սկան ջան,  
Քու մագիէր 'ես պառկիմ, 0՝սկան ջան:

(0՝սկան ժամանակ շաբաթական է:)

Քու պէտլած ջանին մեռնիմ, 0՝սկան ջան:  
ԲՈԼՈԲ ՍԳԱՒՈՐՆԵՐԸ, շաբաթ:

0՝հ, օհ, օհ...

ՕՍԿԱՆ

ԷՌԱՄԻ մտիկ... չալա էն իմ կնիկն ու  
ախչիկը վուր լաց ին ըլում, սրտեներուն  
ցաւում է, զիդիմ. ամա էն անիծած  
Խամփերին էլ, վուր սուք է անում ինձ  
վրայ, արմընելուն էն է... էն կինքումը  
արունս խմում էր ու հիմի կի միթամ  
վնանչիչ... 0՝հվէ, ի՞նչ սուտիր ին . . .

Խամմիերի, Խամմիերի, խափի՛ էտի աշխարհ-  
քին, կպրէ կարասը հազիր է էստի քիդ  
համա...

Մէկ ուսուրանը ծաժէլում է:

### ՅԵՍՈՒ Պ

ՕՍԿԱՆ, ՍԱՏԱՆԱՆԵՐ

ՕՍԿԱՆ, յէ՞ս նայելով:

Վայ մէ... (Մէջ ստորագին:) Մէկ էլ,  
մէկ էլ:

Մեծ ՍԱՏԱՆԱՅ, ծիծառում է:  
Հա՛, հա՛, հա՛...

ՕՍԿԱՆ, լուսվ:

Վայ քիդ, իմ Մարթա ջան. խիշդ իմ  
կէկէլ... երվիցէք, խորվիեցէք դուք էտի,  
'ես էստի... (Երկար լավ է. յէ՞րոյ յանձնած  
հառում է:) Օ՛հ, օ՛հ, օ՛հ... Վայ մէ, խիղտ-  
վում իմ. նաևթի ու կպրի հուտը բօղազս  
է գնում... (Հորոտելով:) Ուփրօ վուր քօ-  
քուրթի հուտը շատ է... Օ՛հ, օ՛հ, օ՛հ...

100  
10  
1

Մեծ ՍԱՏԱՆԱՅ, ծիծառում:  
Հաջաթ չէ, կու սորվիս:  
ՕՍԿԱՆ

Տօ, էստուրը վմնաց կու սորվիմ, յօ-  
րէս կու խիղտվիմ:

Մեծ ՍԱՏԱՆԱՅ

Ի՞նչ իս ասում, Օ'սկան Պետրովիչ,  
բաս ներքիւր վուր դէվէր գնաս, Էնդի Բ'նչ  
կ'օսիս:

ՕՍԿԱՆ

Գանա Էնդի էստու վրայ վաթար է:  
Մեծ ՍԱՏԱՆԱՅ

Վաթար է... Աբա արի մտիկ տու...  
Նշանակոծ պէշից էրած ու բոց է բուրու

գուման և խոյն բարեւում:

ՕՍԿԱՆ, լուսաւոծ և յէ՞ս ժաշուելով:

Վայ մէ, էս ի՞նչ տեսայ... Ա՛յ, թուր-  
մէ դժուխկն ի՞նչ է էլի... Ա՛յ, իմ կա-  
նանչ ու նարգիկ Օրթաճալաս...

Մեծ ՍԱՏԱՆԱՅ

Հը՛, էտ հալա ի՞նչ է. վուրն իժում թա-  
մաշա արա:



ՕՍԿԱՆ, աղջկէլով:

Ի՞նչ գուզիս կուտամ, օղունդ ինձ էս-  
ղանց աղատեցէք:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ

Ի՞նչ պիտի տաս, զլիսեմէտ ինչըու վու-  
տը միրն իս ու միրը: Սաղ աշխարի օսկին  
ու էրծաթն էլ դիվի մէտի միրն է... Ամա  
մի վախենայ, քիզ էնէնց չինք շարշրի,  
վոնցոր ուրիշներուն. դուն էլի բախտա-  
ւուրներեմէն իս ու քու հանգը հիմի-  
կուան ժամանակին իսխա քիչն ին գալի:

ՕՍԿԱՆ

Բաս իմ պատիժն ինչ է, մէ ասէք:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ

Էտու վճիռը Սաթաէլի ձեռին է. ամա  
մինք կարծում ինք, վուր քիզ համա մինձ  
պատիժ չկայ: Չատ վուր պատիժն քիզ՝  
օրէնը մէ էրկու ջէր վառած կրակը կու  
գցին քիզ, իժում մէ էրկու ջէր էլ ՚եփ-  
վան արճճումը կու լիզնին քիզ:

ՕՍԿԱՆ, աղջկէլով:

Իրան տուէք տասչուրս շալին, մի-

թամ վունչիչ: (Մէծ աղջկէլով) է՛յ, մի-  
մախ, էտ խօ կու մեռնիմ:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ, ձիժագէլով:

Ի՞նչ իս ասում, Օ'սկան Պետրովիչ,  
հոքին կու մեռնիմ. հոքին անմահ է:

ՕՍԿԱՆ

Հա, էտ դուրթ է. վայ իմ միխկը....  
(Եռից և հռոկց նեղանալով) Էտու վրայ աւե-  
լի շարշարանք էլի կայ:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ

Բաս շկայ. արա մրի տիս...

Ցոյ և ոռովո մէ ուրիշ ուն, որ էսէրյան  
բայցում է և մըլից աւելի սասորի:  
Էրուն ու բոյ և տուրո գունիուս:

ՕՍԿԱՆ, զորհուրոն վոյը և ընդուռում, սարանա-  
ները վրան լուչնորում են. յերոյ ժիշտիչ ուշի  
գունու:

Էս ինչ տեսայ, դէղի ծծիր, դուն բա-  
րեխօս... Վիշապնիր, տասէրկու գլխա-  
նի օցիր, քառասուն հազար սատանէք,  
կրակ, ալիք. վայ, վայ, վայ, վայ, վայ...

Տէր Աստուծ, Դուն օղորմա: (Կահոց-հահոց

ռո՞ւ և հանգստաց: Յօրէն զուրթ՝ կպրէ կարասը դրած է, կպրով լիքը 'եփ է գալի,  
ով ասիս մէշն է ածած ու կիրկաշ լօբու  
պէս մէշը խլթիսլթում ին... Օ՛հվէ...  
(Սահմանային:) Մէ, քու հօրն օղորմի, էս կը-  
րակին ասա մէ քիչ դէնը գնայ... (Սահ-  
մանային լուշուց է բոցե վըսակց և բոցն ինչուն  
հեջանառուց է:) Բոլորքը սատանէքը շարած ին,  
կըակէ քափկիրնիքը ձեռին, թէ մէկն ու  
մէկն ուզում ին դուս թռչին, գլխումը վէր  
ին տալի ու յիդ մէշն ին ածում... Վահ,  
էն էլ ինչ է. քառսուն հազար միլիոն  
մէկզմէկու վրայ դարսած ին, տակեմէն  
կըակը կպած է, հէնց զիդենաս քուրախա-  
նումը ազուռ ըլին էրում: Էնթէնն էլ  
մէ մինձ պղնձումը արճին ին հալում ու  
չամշերով վուրին բերանն ին ածում, վու-  
րին անգնումը: Մէ խօսքով՝ լիզու չի պատ-  
մի... Վայ, վայ, վայ, վայ, էս ինչիր տե-  
սայ. մարթիք վուր գիդենան թէ էս հան-  
գի բանիր կայ էստի, էլ իրանց օրումը  
միխէ չին անի....

**ՄԵԾ ՍԱՏԱՆԱՑ**  
չըմ, թէ խելօք չիս կենայ, քիդ էլ  
կու տանինք էնդի:

**ՕՍԿԱՆ**

Զարէս ինչ է, վուր խելօք չիմ կե-  
նայ... Սու հալա, էստի ճանանչ օմքնիր  
էլ կան... Օ՛հ, Օուշի, դուն իս:

**ՕՍՔԻՒ ԶԱՅՆԼ**

'ես իմ, 'ես, բարով, հազար բարի իս  
էկի, Օ'սկան Պետրովիչ:

**ՕՍԿԱՆ**

Հաւ տարի Նեղպերուն գայ, լաւ բա-  
րով 'ես իմ էկի: (Ասանչին:) Ախար 'ես գի-  
դէի, վուր է էս գուղ աւազակի բինէն էս-  
տի է է... (Նորից հայուց է:) Յօրէն՝ Թա-  
թօն... (Կանչուց է:) Թամթօ, Թամթօ:  
ԹԱԹՈՒ ԶԱՅՆԼ

չըմ, օղլուշաղեմէս ինչ խաբար.  
գնունց ին:

**ՕՍԿԱՆ**

Աստուծ վուշ գիդէ քու զլուխը: (Ա-  
սանչին:) Միթամ օղլուշաղի համա սիր-

ար շատ է ցաւում... Ինչ ունէր ու շունէր թխառումը տանուլ էրիտ, քախցած ծարաւ էթուղ օղուշաղին ու ինքը գոռքօռ էլաւ. հախն է վուր էստի ին բերի... (Նորից հայուած է:) Յօրէն՝ Բայզուշօվը, քաղաքը վուր քանդից. հախտ է... Մալիկ ինչ ին անում է. պա՛, պա՛, պա՛, պա՛, արճճումը թաթխում ին ու հանում, կ'օսիս Կախէթու չուրշէլա ըլլին շինում... (Գորչէտը հայուած է:) Վահն, Գարասիմ Եակուլիչ\*), դուն իս:

ԳԱՐԱՍԻՄ ԵԱԿՈՒԼԻՉ, անդունուց շուրվ:  
'Ես իմ, Օ'սկան ջան:

ՕՍԿԱՆ, անուղ գոլով, Ձծ ստուհով:

Տօ, խանի-խարաբ, փարազի ասինք  
վուր Է՝ գուղիրը, աւազակնիրը, մարթասպահնիրը, աշխարք քանդողնիրը էստի ին էկի, էն խիդ Գարասիմ Եակուլիմ էստի ինչի իք բերի. Ժամասէր,

\*) «ԽԱԹԱԲԱԼԱ» կօմեդիայի դիխաւոր հեռուլ:

ասծապաշտ, ախկախն օղորմող ու պան  
էլ չէր կոարի իք օրումը:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ

Էնդուր վուր զրսեմէն էտէնց էր էրի-  
ւում, ամա տակէտակ ումն ասիս խափիլ է:  
ՕՍԿԱՆ

Ինչ բեսար նամազուլ իս անում:  
ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ

Վահն, արի՝ իրան հարցրու:  
ՕՍԿԱՆ, Հօռ գնուցվ:  
Գարասիմ Եակուլիչ, Գարասիմ Եա-  
կուլիչ....

Գեղանի սահնեց տուրու է գումար Գորչէտը  
Եակուլիչը:

## ՏԵՍՐԻ Դ

ՕՍԿԱՆ, ՍԱՏԱՆԱՆԵՐ, ԶԱՆԱԶԱՆ  
ՄԵՂԱՒՈՐՆԵՐ

ՕՍԿԱՆ, շաբանանիւլով:  
Վահն... (Մասուծ է սուշոծ:) Ախար էստի

մւր ին բերի քիզ, Գարասիմ Եակուլիչ. թէ  
վուր դուն ժամասէր ու ասծապաշտ էիր:  
ԳԱՐԱՍԻՄ ԵԱԿՈՒԼԻՇ

| Խափով ուզում էի ախչաս մարթու  
տա ու վուխչ իմ կինքը խափելով իմ  
անցկացըի:

ՕՍԿԱՆ

Վահան:

ԳԱՐԱՍԻՄ ԵԱԿՈՒԼԻՇ

Էստու համա ինձ խօ էստի դէվէր  
գյեցին ու հիմի տեսնիմ թէ ով է միր  
քախկումը առանց լափիլ եօլա տանում  
իր բանը: «Ես ասացի ի զարմանալի իմում,  
ասում է, թէ ամենայն մարթ սուտ է»,  
կ'օսէ:

Յած է գուշաճ:

ՕՍԿԱՆ

Ափսուս իմ Գարասիմ Եակուլիչ. ով կու  
աւտէր... (Կրէն ճանաչէր Տէնէն:) Վահան, յօ-  
րէն պարուն Զանդակովը... (Կանչըս է:) Գարասին Զանդակովը  
(Գէտնէ ոտնէն ուռւրու է գուշաճ Զանդակովը:) Դննն

էլ էստի իս... Տօ, թէ վուր խղճերուն  
օղորմում էիր:

ԶԱՆԳԱԿՈՎ

Հինգ-հինգ մանէթ բախչում էի, ամա  
հազարներով թաքուն-թաքուն վիր էի  
խփում:

ՕՍԿԱՆ

Էտ վմնց էիր ժաժ գալի, վուր օշով  
չէր իմանում:

ԶԱՆԳԱԿՈՎ, Յանց Երիտրացնեցով:

Հանգը գիդէի:

Յած է գուշաճ:

ՕՍԿԱՆ

Բաս քու հանին է:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ

Օ'սկան Պետրովիչ, ինչ իս արմնում,  
էտ հանգիքը հազարներով կան էստի,  
վուր ձիր կինքումը լաւ մարթկերանց  
անում ին ունեցի ու իրանց միխկի համա  
յօրիս քանի տարի է էստի էրվում ին...  
Արի՝ մէմէկ-մէմէկ շանց տամ քիզ...  
(Տանուած է Տէ այլ ունչը:) Արի մտիկ արա...

Այ, յօրէս՝ Զարիսածովը: (Գետնի բանից բռւրու  
է գումար Զարիսածովը:) Խօ ձիր աշխարքումը լաւ  
անում էթուղ. հարցրմա, ասմա ինչի՞ իս էկի:

ՕՍԿԱՆ

Պարուն Զարիսածով, էստի ինչ իս  
չինում. դուն չէր վուր վարցկի խաթիր  
աշխարքին հաց էիր ուտեցնում ու էպեղեցիք շինում:

ԶԱՐԻՍԾՈՎ

Գուղերու. հիդ ննդիր էի, էնդով հա-  
րքատացայ ու իժում իմ ճաշերով ու իրիշ-  
նահացերով խալիս աճկիրը կապում էի,  
վուր ուփրօ լաւ գուղութին անիմ:

ՕՍԿԱՆ

Համ, բաս քու համին է, տանջվի հի-  
մի էտի:

ԶԱՐԻՍԾՈՎ

Էս տանջանքին վունցոր կուլի կու  
դիմնամ, վայ վուր գողնալու բան ջեր  
էլի շատ մնաց քախկումն ու իմ ննդրտի-  
քը առանց ինձ պիտի քէփ անին:

Ցած է գնուած:

ՕՍԿԱՆ

Օհ, օհ, օհ, այ ծակ աճկանի:  
Մեծ ՍԱՏԱՆԱՅ, Օւանելու պահելու հի այլ պետ:

Յօրէս՝ Բամբակովը, (Գետնի բանից բռւրու  
է գումար Բամբակովը:) վուր ուրիշի փուղերով  
զրոշկէք ու կալասկէք սարքից ու խալ-  
իրին իրանց փուղը էլ յիդ շէրիտ... Արա  
արի հիմի դէսը... (Բամբակովը ցած է գնուած:) Յօրէս՝ Կիրափուսը, (Գետնի բանից բռւրու  
է գումար Կիրափուսը:) վուր խալիսի առշիւը  
զրուստ գատամէք էք էրեսում, ամա ով  
շատ քրթամ էք տալի, բանը նրա կուռն  
էք շուռ տալի: (Գետնի բանից բռւրու  
է գումար բալունը:) Այ գավերու էն շատախօս  
վէրիլը, վուր համ էսղանց էք շահվում,  
համ էնդանց... Յօրէս՝ էն աւազակ վուր-  
թին, (Գետնի բանից բռւրու  
է գումար բալունը և գումար բալունը հապուլ սողու-  
նուած էն միւանց ու ցած գնուած:) վուր դէղին  
տանեմէն դուս արաւ, ամա աշխարքումը  
պատուաւուր մարթ էք էրեսում: (Ցայց բանը  
է այլ պետ:) Յօրէս՝ Մղպսովը: (Գետնի բանից

բուրու է գույն Աղբառվը, Տիկուեա աւազու որոշեն  
գնուած է յած: ) Խօ կու ճանչնէիլ սրան:  
ՕՍԿԱՆ, առաջ վաղեւով, Երիւ Յեւով իփուած  
է Ճանչնէրին:

Վա՛, սա էլ Էստի է էլի՛. սրա պէս  
արթար մարթ միր քախկումը իսկի էլ չէ  
էլի: (Աղբառվը, հետուից:) Պարուն Մղպսով,  
ճամփէտ ուր իս ծոխ, էսթէնն ուր իս էկի.  
դուն չէիլ վուր օխար ջէր երուսաղէմ էիր:  
**ՄՂԴՍՈՎ**

Դուրթ է օխար ջէր երուսաղէմ էի,  
ամա ախպէրս վուր մեռաւ, նրա վուրթ-  
կերանցն ու օղլուշաղին դրնեցի ու իմ  
ախպուր վուխչ կայինքը ՚ես դաւթեցի:  
Յած է գնուած:

**ՕՍԿԱՆ, առաջին:**

Բաս աճկդ էլ ին հանի, վուր էստի  
ին բերի քիդ:  
Գեղանի առաջ բուրու է գույն Տէ գեղային ին:

**ՕՍԿԱՆ**

Վա՛... (Գեղանի ինը: ) Ա'խչիկ-պարուն,  
քիդ ինչի ին բերի էստի:

ԳԵՂԵՑԻԿ ԿԻՆԸ

**Մարթուս խափում էի:**  
ՕՍԿԱՆ, Տի հռչէ:

Խի՛ դճ մարթ, արի ու իմացի: (Գեղէ-  
յի՛ ինը գնուած է յած, ին՛ նրա գոխորէն բուրու  
է գույն Տի ուժեւ ին, շար հաբուսոր հագնուած: )  
Ճը՛, դուն ինչի իս համեցէր էլի. դուն  
էլ էիր մարթուս խափում:  
**ՏԳԵՂ ԿԻՆԸ**

՚Ես համ մարդուս էի խափում, համ  
սիրեկնիս:

**ՕՍԿԱՆ**

Վա՛յ, գեղինը մանիս դուն: (Տգեւ ինը  
գնուած է յած: ) Տօ՛, ինչ ախմախնիրն ին  
էլի մարթն էլ ու սիրեկանն էլ... Մէ  
տէր հարցնող ըլի թէ ինչ ունէր սա խա-  
փելու... (Տգեւ ինը երեւից:) Ա՛յ, օցիրն ու  
սատանէքը լրզին քիզ էտի: (Գեղանի առաջ  
բուրու է գույն Տէ գեղային ին բուրու շար  
հաբուսոր հագնուած: ) Վա՛, վա՛... Աճկերուս  
չիմ աւտում. գանա էտ դուն իս, ախչիկ-  
պարուն... Սաղ Սօլուակը քու գովեմէն

չկայ ու դուն էստի ի՞նչ իս շինում: Զըլի  
թէ դնն էլ քու մարթուն էիր խափում:  
ԳԵՂԵՑԻԿ ՀԱՐՈՒՍՏ ԿԻՆԸ

Իմ մարթը շատ վուխտ է մեռաւ.  
Ամա նրա մօդ արած փուղերով՝ ես իրստ  
մինձի մինձ էի պատուփում ու ումը  
փուղ էի փուխտալիս, տաս շահի էլ  
շահ էի վրէն բարցում:

ՕՍԿԱՆ

Տէլ օղորմած Աստուձ... (Հարուստ էնու-  
լէ:) Քի պէս հարուստ կնիլը՛: Վունց  
էիր լայիդ անում:

ԳԵՂԵՑԻԿ ՀԱՐՈՒՍՏ ԿԻՆԸ, ՔՐԵՐԵԵՄՆԵ:  
Վծտ եշջ... Բաս 'ես վունց էի ապ-  
րի... Ինձ վրա հարուստնիրը կան էստի  
ու շատն էլ ջեր էլի գալու ին: Քու աճկով  
կու տեսնիս դիփունանցը: (Բանել գէշը  
և գուշի բանը:) Դա սլիդանիա:

ԳԻՒՆԵ և յած:

ՕՍԿԱՆ

Ա'րի ու ասա... Աբա ովկ կու աւտէր  
կնիկարմբաեմէն էստոնք... Մախաս ու

մախաս... (Գէտնէ ոտուից ուռ-ը և գուլիս Թ  
բժեշէ:) Վա, վա... Պարուն հէքիմ-բաշի,  
դմն էլ էստի իս շնուրհ բերի... Թային  
հիւրնդիտ լաւ չիս մտիկ արի, եա լո-  
թիանա էկիլ իս մաջէն էստի տնդղիս...  
Վանց է... էստի է:

ԲԺԻՃԿԸ

Ջատին իմ պըծըցը ու մահէն աղա-  
տի, շատին էլ էսթէնը զրգի իրանց պա-  
պերու մօդ... Ամա էրկու բանումը իրստ  
զայիմ շաթեցին ինձ եախեմէս... Հէնց  
վուր վիզիտիս փուղն ուշացնում էին,  
եա նիզացած՝ ուրիշ հէքմի բան հար-  
ցնում, էն սահաթին էւէտ խռովում էի  
ու իրնի մահի աճկէս զցում հիւրնդին  
էլ, հիւրնդի տիրուչն էլ... Քու հէքիմն  
էլ շուստ գու քայ էստի, կու իմանաս  
թէ ի՞նչ օյին էկաւ նա զլիխտ... Քէփ է  
վուր կու շանց տաք մէկ մէկու... Բիդմթ:

Յած և գիւնե:

ՕՍԿԱՆ

Ջանուման, հէքիմ-բաշի... Ամա էն

ի՞նչ ասաւ... չը՞մ... (Ճ՛րշը ո՞չո՞ք բերանն  
է առանց) է՞ն է, էն... չիմի է միտս  
գալի... կուճուս թերանը կապվիլ էր, էլ  
փունչիշ չէի կանացի մարսի, նա ինձ  
դողյնելու դիղ էր տալի... Քինաքինէ  
տրաք արաւ ինձ էն դիժ հարուղին...  
Այ, Աստուծ անէ քու դիվանը, ահա...  
ի՞նչ էր ուզում ինձմէն, եա օղլուշաղիս  
միխին ուր էր նընկնում. մաղուլ ապրում  
էի ինձ համա արխային... Մէ գայ ջեր  
հալա, հէստիկ շինիմ, վուր... Տէր ամի-  
նակալ Աստուծ, էս ովքիր տեսայ ու  
ի՞նչիր իմացայ ՚ես էստի... Վայ, վայ,  
վայ, վայ, վայ... ՚ես փաս սրանց մօդ...  
է՞ս հանգի էլ միղաւուրինիր:

### ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ

Արի, քանիսը գուզիս վուր էլի շանց  
տամ... Ահա, ահա, ահա... հը՞՝, էլմ...  
ահա...

Գետնի ոտուկց ուր էն գուց երիւս ու-  
ռից յայտնի մեղմարտեր, ուր մէտ  
մետնի ետևեց, յետոյ շատերը մետնի:

ՕՍԿԱՆ  
Վա, վա, վա, վա, վա... (Մէծ սորու-  
նակն): Լաւ է, լաւ, քու հօրն օղորմի, զահ-  
լէս մի տանի...

ՄԵՐՄԱՐԻՆԵՐ յան էն գնաւն:

### ՏԵՍԱԼ Ե

### ՕՍԿԱՆ, ՍԱՏԱՆԱՆԵՐ

ՕՍԿԱՆ, շարունակութեալ:  
՚ես տեսնում իմ, վուր սաղ աշխարքը  
դիփ էստի ին էկի... Բաս արքաութինն  
էլ օչով չէ զնում:

### ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ

Հաղըէնը մէկը. էն էլ թէ զնում է,  
էլի խիղճ մարթկերանցմէն. հարուստնի-  
րը դիփ էստի ին գալի մէ գլուխ, դիփ:  
ՕՍԿԱՆ, գլուխ շարժելու առանցքն:

Էնդուր էլ Քրիստուսն ասաւ է՝ աւե-  
լի հիշտ է, ասում է, ուխտն ասղումն  
անցկենայ, կանց թէ մինձատունն ար-

քառովինը տուն գնայ, կ'օսէ... զայ  
նբանց միխկը... Ամա իմ քանը խիստ շլուր  
է, ձիր արիւը... Ի՞նչ մօգօնիմ, վուր էս-  
դանց ազատվիմ... (Մէջ ստորագիրնեած:) Մէ  
ասմա արքառովինի ճամփէն վուրթէննէ:  
Մեծ ՍԱՏԱՆԱՅ, բէն ոչ հուշ ցոյց բաշուն:  
Այ, էնթէնը մնայ:

ՕՍԿԱՆ, ստորագիրնեած:

Վունց ծըլկըվիմ... (Մէջ ստորագիրնեած:)  
Տօ, մէ գէվէր գնա, քու Սաթաէլին իմաց  
արա, վուր ՚ես էկիլիմ է:

Մեծ ՍԱՏԱՆԱՅ

Արա ձիր Բնչը կու կոտրէ. էնդադա  
բանիրը քու աճկով տեսար էստի ու էլի  
իս ուզում խափի. ուզում իս ինձ ցանի  
քու մտկումն էլի:

ՕՍԿԱՆ, ստորագիրնեած:

Վուրդի իմացաւ. դրուստ վուր սա-  
տանայ է էլի էս անիծածը:

Մեծ ՍԱՏԱՆԱՅ

Ի՞նչ ապրանքնիր իք դուք Էլ, սատա-  
ներու վրայ վաթար իք դառի. վայ էն

սատաներու միխկը, ով ձիր չի ճանշ-  
նայ... Վաղուցուայ ժամանակը առուտե-  
հան վաղ-վաղ վուր գալիս էինք ձիր քա-  
ղաքը, իմանում էինք, վուր մարթիքը,  
տանեմէն դուս գալիս, ասում էին. «Հրա-  
ժարիմք ի սատանայէ և յամենայն խա-  
րէութենէ նորա». հիմի մինք պիտի  
ասինք՝ հրաժարիմք ի մարդկանէ և յա-  
մենայն խարէութենէ նոյցա:

ՕՍԿԱՆ

Դէհ, բաս ձեռը վի կալ ինձմէն, հրա-  
ժարիմք ու պլծի էլի... Հը՛, լաւ վիքը  
արա, ՚ես վուր գնամ արքառովին, էնդի  
բարի կու խօսիմ քիզ համա. կուլի վիք-  
չը՝ յիդ նուր մէկանց էլի հրիշտակ շի-  
նին քիզ:

Աստորագիրնեած, ծառը եւու երեսը ծառածուռաց է:

Մեծ ՍԱՏԱՆԱՅ

Ո՞վ կու առւն թողնէ քիզ արքառովին.  
Ի՞նչիք իս գուս տալի... Գժվիլ իմ, վուր  
ձեռնեմէս դուս թողնիմ քիզ. ուզում իս  
քու մազիէր ինձ տանջին:

ՕՍԿԱՆ

Ալս, Տէր Աստուծ, նէտայի ինձ էլի  
աշխարք բերիս ու իմ օրումն էլ միխկ  
չիմ անի:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ

Կտ գլխմէմէտ հանէ, վուր էլ չի ըլի...  
(Սասպիր կամաց առաջ և արդիական շայլանեւ-  
ուն ձայն և ավանայ) Դէհ, հաղբալի, Սաթաէ-  
լլ գալիս է:

Յանէմը բեմի երրաւայը բացվում է ուժու-  
թը գեղանի որոնից դուշն է գալիս  
Սաթաէլլ, գեղի վայ նսպան և շըր-  
ջաղաղուած սանազն ուսումնի ու աս-  
տիմնի անլեիւ սովորանելով, դեւ-  
տով, վեշտուերով ու չար հրեշտակնե-  
տով, որոնց գոյլում են առանցին շնե-  
ռութեամբ և ուժուային շանաշներով:

ՏԵՍՔ 2

ՕՍԿԱՆ, ՍԱԹԱՅԷԼ, ՍԱՏԱՆԱՆԵՐ

ՕՍԿԱՆ, սարդութած:  
Տէր, մի դարձուցանիր զերեսդ\*) քո  
յինէն:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ, ՕՌԱՆԻՒ:

Ե՞նթէնը կանգնի. կու կանչին քիզ:  
Սաթանանէը իիսու կարգադրութեամբ և  
իրեն յարգանուվ ու սարգանը առ-  
ջաւանում են Սաթայէլլն հրա ձնինէրն  
ու սոնները հայբուրելով, իու Ֆա-  
նիսը նաև Երկրութեամ նրան:

ՕՍԿԱՆ, ժամանուի առ ժամանուի և ԱՇուուի,  
Տիշտեաւ հանդեսը շարուանակում է:

Վա... կստունք էստի էլ է էլի...  
Մոլի թէ ինչիր ին անում... Զեր սա-

\*) Փոխանակ ասելու՝ «մի դարձուցանիր զերեսդ...»

տանէն ի՞նչ է, վուր նրա վուտնիրն ի՞նչ  
ըլի... Յօրէս ինձ համա կու պարպին:  
ՍԱԹԱՅԵԼ, Թշու հանգեստ և գոռողբար:  
Արա, բերէք դրան էստի:  
ՄԵԾ ՍԱՏԱՆԱՅ, բանաւ է Օուտնին՝ ուշ յաւ  
է արտայացուած, և պանաւ է այս բեռի Սաւ  
լայել:

Այ, քու Սաթայէլական մինձութինը,  
Էս Օսկան Պետրովիչ իրասածովն է:  
ՍԱԹԱՅԵԼ,

Քիդիմ...

Խշանու հրանայուած է բայ լւոշնել Օուտնին:  
ՕՍԿԱՆ, պատրուելու մէծ սարանայից, Սալայելնին:  
Քու մինձութինը, ի՞նչ իմ արի. ա-  
խար ինձմէն ի՞նչ ին ուզում:

ՍԱԹԱՅԵԼ,

Ի՞նչ իս արի... Բաս էն վրնց էր, վուր  
օրէնը հարուր ու իսուն ջէր սուտ Աս-  
տուձ էիր օրթում ուտում, Քրիստոսին  
խաչեմէն վէր բերում ու ապրանքտ էն-  
դով սաղացնում:

Սարանգել հայեցած է յժուած իր շրաբը:

ՕՍԿԱՆ, առանչէն:

Էս անիծածնիրը վուրդի ին իմացի...  
(Սալայելնին:) Քու մինձութինը, մի աւտա.  
Էտ վրէս շառ ին մօգօնի սատանէքը:  
ՍԱԹԱՅԵԼ,

ԱՌ... Էստի էլ իս սուտ ասում:  
ՕՍԿԱՆ

Ասինք թէ էտ էտէնց է. ուրիշ ի՞նչ իմ  
արի, քու մինձութինը:  
ՍԱԹԱՅԵԼ,

Իժում էն վուր՝ կշիռքը ձեռիտ վուր  
վիր էիր կալնում, միտա է վուր ճկատկով  
քաշը ծուռմ էիր ու շատ ծախածի մա-  
զիկը առնողին քիշ էիր տալի:

ՕՍԿԱՆ, առանչէն:

Էս անիծածնիրը թային գլխիս կանգ-  
նած ին էլի: (Սալայելնին:) Հա, քու մինձու-  
թինը, ի՞նչ անիմ վուր էտունք արիլ իմ.  
Ի՞նչ միխակ ունեցիլ իմ, խոստովիլ իմ ու  
զզացիլ իմ. անմիզն Սատուձ է:

ՍԱԹԱՅԵԼ,

Ղուրթ է, խոստովիլ իս էլ, զզացիլ

իս էլ, ամա իստակ սրտով չիս զղճացի:  
Միտա է վուր տէրտէրի մօդ չոքած, խոս-  
տովնելիս, էլի ուշկ ու միտկտ առու-  
տրումն էր. զղճալիս, ժամումը կանգնած,  
մտկումդ դարսում էր, վուր տէրտէրի  
դրած ապաշխարանքը չուստ պլծնիս ու  
գնաս, էլի նուր-մէկանց կցիս խափով ա-  
ռուտուրը:

ՕՍԿԱՆ, ՄԱՐԴ:  
ՀՈՒՐԾ է, միղայի Աստծու:

ԱՀՏԵՐԸ ՌԵՌՈՎ է:  
ՍԱԹԱՅԻԼ, ԱՄՊԱՆԻԵՐԻՆ:

Սրան օրէնը էրկու ջէր վառած կրա-  
կը դրէք... (Օհանը բռնում է:) 'Երիք ջէր  
'եփվան կպրնումը լիզցրէք ու, չունքի էս-  
տի էլ ուզում էր իմ պատուական սա-  
տանին խափի, մէ-մէ չամշայ հալած ար-  
ճիճ ածէք բերանը... Զեր թողէք մէ քիչ  
էստի քէփ անէ. ուրիշ հարկաւոր բան կայ:  
ՕՍԿԱՆ, ՖԻՇԱԿԻ:

ԱՇ, էնէնց դնէք քէփ անիք: (Սալայէ-  
ւին:) Ախար, քու մինձութինը...

ՍԱԹԱՅԻԼ

Սնւ, ձէնդ... (Ամպանիներին:) Արմ,  
թնդ բերին, ինչ ասիլ իմ... (Գծուտի ուն-  
դը հէտ մնակամ զորինում է: Գեղանի ոսուից բոցա-  
պոտ շուրը են ժուկն Սալայէլը ոչ ու չափ հող-  
ման երիւու սենիստի սարանայ իրուէ բարձե-  
սով, որոնցից հէտի վըսոյ ուրած է իրուէ հան-  
գուու, իսէ մեսի վըսոյ նոյնուին իրուէ շանշան—  
Սալայէլը պոտինէրը երիւու շուլայուն: ) Լամ... (Մէծ  
սարանային:) Առաջ արի... Յարգս յարգա-  
ւորաց, պատիւս արժանաւորաց... (Մէծ-  
էտպէտ սարանային:) Բերէք... (Սէսէտ-  
պէտ սարանանէրը հօդենալու Սալայէլը, հաճէռու-  
թում են նըս ծննդերն ու սոդնէրը և չորսում նըս  
աջ ու չափ հողման: Մէծ սարանային:) 'Ես քիզմէն  
շատ չնորհակալ իմ... Դուն արժանի իս  
իմ առանձին օգորմութենին: (Մէծ սարանան  
չորսում է Սալայէլը սուսոց և նմանապէս հաճէռու-  
թում նըս ծննդերն ու սոդնէրը:) Ես քիզ ման-  
գաղ, վուր աւելի հիշառութենով հնձիս  
մարթկերանցը: (Տալու է նըս մանդուս, ուեց  
իսէրն բոց է բարձրանում: ) Ես էլ քիզ իմ

պլատկիրքը, վուր ուրիշներու համա օրինակ ըլի քու հաւատարմութինը: (Կախ է տնուած նրա վեց դժոխոյին շատանանը, որից նոյնաբեր բոց է բարձրանաւած:) Ա'սլրիս, զօրանաս... (Դաստ է լուլը նրա գլուխ: ) Զարով վայիլիս:

ՕՍԿԱՆ, Ձեռւակ և տառանուլեամբ:

Ինձ դժուլիկն ին զցում, իրանք վէշքաշնիր բաժնում:

ՄԵԾ ստորանան և ունեւատողեար ստորանաները  
հարժու համբուրուած էն Սալայէլ  
ծննդեն ու սրճերը և գնուած իանդ-  
նուած ելանց ունը: ՄԵԾ ստորանան  
ինուրուած է:

ՍԱԹԱՅԵԼ, ստորանաներէն:

Աբա, ասէք՝ դիվիր զան, ուրախա-  
նանք, վուր նուր թիքայ էկաւ միզ համա:

Դժոխոյ պահքը զարիւած է երիւա անգամ:  
Լուկուած է ստորանաների երաժշտութիւն:  
Բեմը լցվուած է երիւեա ուրը երող չար  
հոգիներով:

## ՏԵՍԱԼ Է

ՆՐԱՆՔ, ՊԱՐ ԵԿՈՂ ԶԱՐ ՀՈԳԻՆԵՐ

ՕՍԿԱՆ, դարձեալ ժամանակ առ ժամանակ և մե-  
ջուակ, մինչդեռ չարքիները պարուած են, նըսն  
փայտայէլով:

Ա'զրաթը խէր ըլի սրանցը. սիրտս  
մէ քիշ յիդ էկաւ... էս դրուստ թրեա-  
թրի հանգն ին խազում էս անիծած-  
նիրը... Ա'լս, Մարթա ջան... (ՄԵԾ ստ-  
որանոյին, որ այս հիջոյին յափշտանուած զննուած  
էր իրակ շատանանը:) Էս ամեն օր կու տես-  
նիմ սրանցն էսալի:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՑ

Էլ քիդ մկ կու դուս թողնէ դժուլի-  
կեմէն:

ԶԵՐԺՈՂԵՐ համբուրուած է իրակ շատանանը,  
որից իրին ու իրին բոց է բարձրանաւած:  
ՍԱԹԱՅԵԼ

Լաւ է... (Պարը և երաժշտութեանը դադա-

բուժ Են. ամենուը հնուժ Են ժորացած, բայց 0ս-  
էտուը, ով հեռաշետք ընդուռած է ապրոսպելք որու-  
թենո՞ւ Տէջ: ) Ամենակարող Աստծու բարգու-  
թենով, 'ես չար Սաթաէլս, դժուխվի յա-  
փակենական թաքաւուրը, իշխանն ու հրա-  
մանատարը,—մութի ու խաւարի պաշտ-  
պանը, տէրն ու տիրականը,—լուսի, լու-  
սաւուրութենի, արթարութենի, ազատու-  
թենի, օղորմութենի, մարթասիրութե-  
նի, ամեն բարութենի ու ճշմարտութե-  
նի ներհակը, հակառակն ու անհաշ-  
թշնամին,—ստութենի ու խափէութենի,  
անօրէնութենի ու անիրաւութենի, անա-  
ռակութենի ու անսկամութենի, նենդու-  
թենի ու խարդախութենի, գուղութենի  
ու աւազակութենի, գազանութենի ու  
մարթասպանութենի, ամեն շարութե-  
նի, ամեն լրփութենի անհատնելի աղ-  
թիւրը, ներշնչողն ու առաջնուրթողը,  
իսկզբանէ անտի մինչ ցկատարածն աշ-  
խարհի, —հրամաէլով հրամառմ իմ ձիզ,  
հաւատարիմ իմ արբանեակնիր՝ չար դե-

ւիր, չար վիշապնիր, «չար սատանէք, չար  
հրիշտակնիր, չար սլաշտօն վարողնիր,  
չար խորուրդ տուողնիր, չար կամք կա-  
տարողնիր ու ամեն չար զօրութին ու-  
նեցողնիր», տարէք զբան՝ Օսկան Պետրո-  
վիչին, վասն մեղաց իւրոց, դժուխվը դէ-  
վէր, յաւիտեանս յաւիտենից, ու կատա-  
րեցէք էնդի զբա գլխին ինչ վուր էլախտ  
հրամաէցի... (Դժութէք ունուշտուը ստորէտուց  
է: ) «Անդ եղիցի լալ և կրմել ատամանց: »  
(Սալաշէլք նշանի վրայ շար հոգեմերը նորից պա-  
րուած էն աւելք մեծ ուժով և արտէռ-լեռնիւ-  
ութունէի զանգը երես անգամ զարիւած է: ) Դէհ:  
Ստորանոները յափշտակուած էն 0ուտնին և  
բարձրացրած պահուած էն նըտն դեղի  
բեմ նորչը:

### ՕՍԿԱՆ

Վայ մէ, դէղի ջան, վայ մէ... Օտլե-  
ցէք, մ'կ է քրիստոնայ...  
Ստորանոները յժուած էն նըտն դեղին:

ՎՐԻՊՊԱԿՆԵՐ

Երես: Տող: Տպած է: Պէտք է:

7	3	ՏԵՍԱԼ	ՏԵՍԱԼ
9	4		
—	11	ՊՐՃՄԱՆ	ՊՐՊԱՃՄԱՆ
10	2	ԷԼ	ԷԼ
—	1 ՆԵՐՔԵՒԻՐԸ՝ ՄԻԿԱՋ	ՄԻԿԱՋԻ	ՄԻԿԱՋԻ
13	4 " ՎՈՒՆՉԻՒՆ	ՎՈՒՆՉԻՉ	ՎՈՒՆՉԻՉ
19	8 ՎԵՐԵՒԻՐԸ՝ ՇԱՏԵՐԸ	ՇԱՏԵՐԸ	ՇԱՏԵՐԸ
30	4 ՆԵՐՔԵՒԻՐԸ՝ ՔԱՆԱՀԸ Է	ՔԱՆԱՀԸ Է	ՔԱՆԱՀԸ Է

1769X  
17698  
17699  
17700  
17701  
17702  
17703

2013

